



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 22.05.16 թ.

Ելք № 026

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հայտնում ենք Ձեզ, որ դեռևս 2015 թվականի նոյեմբերի 25-ին կայացած Հարկային խորհրդի նիստի օրակարգում էր ընդգրկված «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված՝ հարկային հաշվարկների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման էլեկտրոնային համակարգի կիրառության հետ կապված խնդիրների քննարկումը:

Ի թիվս էլեկտրոնային համակարգի կիրառության հետ կապված այլ հարցերի, առաջարկվել էր հարկ վճարողներին տեղեկացնել հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի և հարկային հաշիվների դուրսգրման խափանումների և դրանց վերացման հնարավոր ժամկետների մասին:

Նշված հարցը քննարկվեց հարկային խորհրդի անդամ Վ. Միրումյանի և խնդրի քննարկման նպատակով հրավիրված՝ հարկային հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման էլեկտրոնային համակարգերի աշխատանքների համար պատասխանատու Մ. Փաշայանի մասնակցությամբ: Հարցի քննարկումից հետո, որպես ամփոփում հարկային մարմնի կողմից հավաստիացվեց, որ անկախ այն հանգամանքից, թե ում մեղքով է խափանվում համակարգը, հարկային մարմինը կողմից հարկ վճարողներին ծանուցվի այդ մասին՝ հրապարակային կերպով (անհրաժեշտության դեպքում կներկայացվի նշված նիստի արձանագրությունը):

Մինչդեռ առնվազն մի քանի անգամ նշված հավաստիացումից հետո եղել են դեպքեր, երբ հարկային մարմնի հարկային հաշվետվությունների ներկայացման և հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման էլեկտրոնային համակարգերը խափանվել են, սակայն հարկային մարմնի կողմից չի ծանուցվել և ռիսկի տակ է դրվել ինչպես հարկ վճարողների կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների կատարումը, այնպես էլ ամենօրյա մատակարարումներ իրականացնող հարկ վճարողների գործունեությունը:

Ելնելով վերոշարադրյալից, հարկային մարմնից խնդրում ենք հետայսու պահպանել օրենսդրությամբ սահմանված դրույթների պատշաճ կիրառումը և հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից հավաստիացումների, խոստումների և ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան